ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

31.10.2018

ՀՀ ԱԺ պետաիրավական
հանձնաժողովի նախագահ

պարոն Գեւորգ Կոստանյանին

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Քրեական գործերով համաներում հայտարարելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ.

Հարգելի պարոն Կոստանյան.

Հաշվի առնելով այն փաստը, որ վերոհիշյալ օրենքը որոշ չափով տարածվում է <Սասնա ծռեր> քրեական գործով անձանց վրա, որի արդյունքում կան զոհեր, անտրամաբանական եմ գտնում, որ համաներումը չի տարածվում Նորք-Մարաշ քրեական գործի մասնակիցների վրա, որտեղ զոհեր եւ գործողություններ չկային եւ կար միայն մտադրություն:

Բացի այդ, նման դեպքում խախտվում է Սահմանադրության 29-րդ հոդվածը, քանի որ առաջ է գալիս խտրական վերաբերմունք:

Առաջարկում եմ բարի կամքի դրսեւորումը տարածել նաեւ <Նորք-Մարաշ> քրեական գործով անցնող անձանց վրա:

Հարգանքով՝ Հ. Բաբուխանյան